
**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐՆԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԴԱՎԹՅԱՆ Ս. Դ.

Գեղարվեստական տեքստը մայրենի լեզվի ուսուցման համակարգում ուսուցման կարևորագույն միավոր է: Ոչ ոք չի կասկածում, որ մայրենի լեզվի խոսքային կադապարները երեխան սկսում է յուրացնել իր ծննդյան օրվանից կամ ավելի վաղ: Մակայն երբ խոսքը վերաբերում է հասուն տարիքի մարդու հաղորդակցվելուն, հաղորդակցական իրազեկությանը, ապա նրա խոսքը չի կարող լինել խոսակցական, գրական, գիտական լեզուների տեսանկյունից գրագետ, հարուստ՝ համապատասխան ժանրային և ոճական արտահայտչամիջոցներով, եթե նա ժամանակին չի ուսումնասիրել գեղարվեստական տեքստեր: Հատկանշականն այն է, որ սովորողները սկսում են մայրենի լեզվով գեղարվեստական տեքստեր վերլուծել դեռևս կրտսեր դպրոցական տարիքում: Ինչ վերաբերում է օտարալեզու գեղարվեստական տեքստերին, ապա խնդիրը կարելի է դիտարկել այլ հարթության վրա, այն առումով, որ յուրաքանչյուր տեքստ վերլուծելուց առաջ սովորողները պիտի ունենան համապատասխան խոսքային կարողություններ և հմտություններ: Մասնագիտական անգլերենի դասընթացի շրջանակներում գեղարվեստական տեքստի հետ աշխատանքը անհրաժեշտ է դիտարկել թե՛ տեսական, թե՛ գործնական հարթության վրա:

Անգլերենի մասնագիտական դասընթացում ուսանողները գործ ունեն գեղարվեստական տեքստի վերլուծության տարբեր մակարդակների հետ՝ լեզվաբանական, բանասիրական, գրականագիտական, ոճաբանական, գեղագիտական և այլն: Ընդ որում, նշված մակարդակները հիմնականում դիտարկվում են լեզվաբանական վերլուծության շրջանակներում: Գեղարվեստական տեքստի բանասիրական վերլուծությունը ներառում է լեզվաբանական և գրականագիտական մոտեցումները: Այն կարևոր է հատկապես գրավոր տեքստերի թարգմանչի որակավորում ստացող ուսանողների համար, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցության, զբոսաշրջային ոլորտի ապագա մասնագետների համար:

Անգլերենի ուսուցման գործընթացում կարևոր է հստակորեն տարբերակել ուսումնական, բնագրային, գեղարվեստական տեքստերը: Ակնհայտ է, որ որևէ ուսումնական տեքստի հիմքում կարող է ընկած լինել գեղարվեստական տեքստ: Մի կողմից՝ գեղարվեստական տեքստը կարող է լինել ուսումնական, եթե այն կրճատվում է՝ հանելով կամ ձևափոխելով տարբեր բնույթի (երկրագիտական, իրությանին, լեզվական, ոճական, բարբառային և այլն) դժվարություններ: Մյուս կողմից՝ այն կարող է ուսուցման նյութ դառնալ առանց որևէ փոփոխության: Այս դեպքում դա հանդես է գալիս նաև որպես բնագրային տեքստ: Գեղարվեստական տեքստի վերլուծութ-

յան գործընթացում անհրաժեշտ է հստակ տարանջատել գեղարվեստական տեքստերը ոչ գեղարվեստականից: Ըստ տրամաբանության՝ տեքստերը բաժանվում են երկու խմբի՝ գեղարվեստական և ոչ գեղարվեստական:

Ինչպես հայտնի է, ըստ գործառական ոճի, ոչ գեղարվեստական տեքստերը լինում են պաշտոնական-գործարար, գիտատեխնիկական և թերթային-հրապարակախոսական: Գեղարվեստական տեքստերին են վերաբերում խոսակցական և գեղարվեստական-գրական տեքստերը: Ըստ ռուս ուսումնասիրողների՝ «Գեղարվեստական տեքստը բանասիրական գեղարվեստական ստեղծագործություն է, որը ներկայացնում է հեղինակի հայեցակարգի իրացումը նրա ստեղծագործական երևակայությամբ ստեղծված աշխարհը պատկերելիս: Այն արտացոլվում է գեղարվեստական տեքստի մեջ նախնական մտահղացմամբ ընտրված լեզվական միջոցներով, որոնք իրենց հերթին մեկնաբանում են իրականությունը և հասցեագրված են ընթերցողին, որը մեկնաբանում է այն՝ համաձայն իր սեփական հանրամշակութային իրազեկության»¹: Գեղարվեստական տեքստի բնութագրերը ներկայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ոչ գեղարվեստական տեքստերի գործառական ոճի որոշ գծեր կարող են տեղ գտնել գեղարվեստական տեքստերում: Այսինքն՝ ըստ գործառական ոճի տեքստերի տարաբաժանումը ոչ միշտ է արդյունավետ: Օրինակ՝ գիտաֆանտաստիկ գրականության մեջ կարելի է հանդիպել բազմաթիվ գիտական եզրույթների, և հակառակը՝ գեղարվեստական տեքստերում գիտական ոճին բնորոշ մեծ քանակությամբ հասկացությունների: Երբեմն գիտնականները ստիպված են լինում տեքստի տեսակը որոշել դրանում տեղ գտած գերակա ոճով:

Գործառական ոճը ճիշտ որոշելը կարևոր է և՛ տեքստի համարժեք ապակոդավորման, և՛ այն ուսուցողական նպատակներով վերարտադրման համար: Ի տարբերություն գիտական, տեխնիկական և գործարար տեքստերի՝ գեղարվեստական տեքստի յուրահատկություններից մեկն այն է, որ վերջինիս բառապաշարը միատարր չէ, տարաբնույթ է, և դրան բնորոշ չէ համապատասխան տերմինաբանական համակարգ: Ըստ վերոհիշյալ հեղինակների՝ «Գեղարվեստական տեքստը բարդ կամ համալիր տեքստ է (կառուցվածքի պարամետր), գեղարվեստական ոճի ստեղծագործություն է (գործառական-ոճական պարամետր), պատրաստված տեքստ է (պատրաստվածության պարամետր), չամրագրված տեքստ է (ալգորիթմիզացիայի պարամետր), ճկուն է, ներփակ (մտահղացման մեկնության պարամետր), նկարագրական (գործառական-գործաբանական պարամետր), ամբողջական և կապակցված»²: Ընդհանուր առմամբ, այս սահմանումը բարդ է, դրանում առանցքային է տեքստի սահմանման ոճական հայեցակետը: Տեքստի սահմանումը և բնորոշումը կատարվում են նաև ըստ նրա ժանրային հատկանիշների կամ պատկանելության:

¹ Бабенко Л. Г., Васильев И. Ф., Казарин Ю. В., *Лингвистический анализ художественного текста, Екатеринбург, 2000, с. 64.*

² Бабенко Л. Г., Васильев И. Ф., Казарин Ю. В., *նշվ. աշխ., էջ 55:*

Ինչպես հայտնի է, ժանրերը բաժանվում են միջուկայինի (ոճի յուրահատկությունը որոշող), մակերեսամերձի (պերեֆիրիկ (ոճի հիմքը կազմող), սահմանայինի, որն էլ իր հերթին բաժանվում է միջուկային-սահմանայինի և մակերեսամերձ-սահմանայինի³: Վ. Բեյանինը, գեղարվեստական տեքստը դիտարկելով որպես համակարգի տարր՝ «իրականություն-գիտակցություն-աշխարհի պատկեր-լեզու-հեղինակ-տեքստ-ընթերցող-պրոեկցիա», բացահայտում է գեղարվեստական տեքստի կառուցվածքի կախվածությունը այն սերող, ծնող տազնապահարույց գիտակցությունից, որը որոշում է տեքստի զգայական-իմաստային դոմինանտը, և վերջինս կազմակերպում է նրա իմաստաբանությունը, ձևաբանությունը, շարահյուսությունը և ոճը⁴: Վ. Բեյանինը տարբերակում է գեղարվեստական տեքստի յոթ հիմնական տեսակ՝ «լուսավոր» և «ակտիվ» (երկուսն էլ արտացոլում են խելացնոր անձի աշխարհագրացումը), «զվարթ» (ծնված հիպերմոլուցքով), «տխուր» (ծնված հեղինակի հուսահատությամբ), «բարդ» (ծնված մտազարությամբ), «խառը: Նախկինում նույն հեղինակը առանձնացրել է «դաժան», «հակահասարակական», «հոգնած» և այլ տեքստերի տեսակներ⁵: Նա անմիջական կապ է տեսնում հեղինակի անձի տազնապահարույց շեշտադրության և նրա ստեղծագործությունների թեմատիկայի միջև: Այսպիսով, «լուսավոր» տեքստերը, ըստ նրա, որպես կանոն, նկարագրում են բնությունը, նվիրված են կրոնին: «Ակտիվ» տեքստերը նկարագրում են քաղաքականությունը, պայքարը իդեալների համար, բարոյական խնդիրները: «Զվարթ» տեքստերը նկարագրում են ճանապարհորդությունները, արկածները, երաժշտական կատակերգությունների սյուժեները: «Գեղեցիկ» տեքստերը նկարագրում են անսովոր իրադարձություններ, մելոդրամատիկ և օպերետային սյուժեներ, «մութձ տեքստերը՝ պայքարը գոյության համար, էքզիստենցիալ իրադրությունները, դետեկտիվ պատմությունները, «սարսափ ֆիլմերի սյուժետները», «տխուր» տեքստերը՝ ծերությունը և երիտասարդության մասին հիշողությունները⁶:

Գեղարվեստական տեքստի վերլուծության ժամանակ կարևորվում է գենդերային մոտեցումը: Հասկանալի է, որ կին և տղամարդ հեղինակների ներաշխարհները հիմնականում շատ հարցերում տարբերվում են: Պատահական չէ, որ այդ հարցը առաջին պլան է մղվել հատկապես վերջին տարիներին: Գեղարվեստական տեքստի վերլուծության կարևորագույն մաս է տեքստի կառուցվածքային-իմաստային բաժանումը: Ինչպես հայտնի է, տեքստի հիմնական հատկա-

³ Троянская Е. С., Особенности жанров научной литературы и отбор текстов на различных этапах обучения научных работников иностранному языку. Функциональные стили. Лингвистические аспекты, М., 1985, с. 189-201.

⁴ Белянин В. П., Основы психолингвистической диагностики. Модели мира в литературе, М., 2000, с. 10.

⁵ Белянин В. П., Психолингвистические аспекты художественного текста, М., 1988, с. 48.

⁶ Белянин В. П., Основы психолингвистической диагностики, с. 118.

նիշներին է վերաբերում մտահղացման ամբողջականությունը՝ կապը և բաղադրամասերի կապակցելիությունը:

Գեղարվեստական տեքստի միջոցով անգլերենի ուսուցման կարևորագույն բաղադրամաս է նրա ոճական առանձնահատկությունների լեզվաբանական վերլուծությունը: Դա իրականացվում է բառային, ձևաբանական, շարահյուսական, հնչյունաբանական մակարդակներում: Բառային մակարդակում վերլուծությունն իրականացվում է դարձույթների կամ այլաբանությունների մակարդակում: «Նախկինում կոչվում էր փոխակերպություն, որն այժմ գործածվում է այլ նշանակությամբ (տե՛ս փոխակերպում) քոռ ոճարտահայտչական միջոց, փոխաբերական իմաստավորում, երբ լեզվական տվյալ արտահայտությունը (բառ, բառակապակցություն, նախադասություն) խոսքային իրադրությամբ պայմանավորված և կամ տվյալ զուգորդմամբ (կապակցության մեջ) գործածվում է այլ առարկա, գործողություն, հատկություն, երևույթ արտահայտելու համար, այն փոխում է լեզվական միավորի առարկայական վերաբերությունը (հատկացումը, փաստորեն դրսևորվում է երկպլանային (երկբնույթ, երկկողմանի) կամ այլաբնույթ կարգով՝ իբրև բուն և փոխաբերական նշանակությունների համակցում, համադրում: Այս հանգամանքն էլ նրան տալիս է արտահայտչականություն, դարձնում խոսքի պատկերավորության միջոց: Ըստ այդմ էլ այն ավելի հատուկ է գեղարվեստական խոսքին, քան, ասենք, գիտական կամ պաշտոնական-գործարարական ոճերին: Ոճական մակարդակում գեղարվեստական տեքստի հիմնական տեսակներն են՝ «ակնարկ, այլաբանություն, անձնավորում, հակասույթ, անվանափոխություն, հակաբանություն, համըմբոնում, հեգնանք, մակդիր, չափազանցություն, պարադոքս, փոխաբերություն, փոխանություն, փոքրացում և այլն»⁷:

Շատ կարևոր է սահմանել բառային միավորների հարանշանակային դաշտը (коннотативное поле), որը, ըստ Օ. Բուրուկինայի, «զգացմունքների, զգացումների և զուգորդումների ամբողջությունն է, որն առաջանում է անհատի գիտակցության մեջ որևէ բառային միավորի (տեսողական, հնչյունային) ընկալման ժամանակ»⁸: Հարանշանակության բովանդակային առանձնահատկությունները ներկայացնելիս Ի. Արնոլդն առանձնացնում է նշանակության զգայական, գնահատման, արտահայտման և ոճական բաղադրամասերը⁹: Գեղարվեստական տեքստի վերլուծությունը պահանջում է տեքստի հարանշանակային դաշտի ապակողավորում:

Այսպիսով, անգլերենի ուսուցման և ուսումնառության գործընթացը տեքստի ներակա իմաստների բացահայտման գործընթաց է:

⁷ Պետրոսյան Հ., *Հայրենագիտական բառարան* (Է. Աղայանի ընդհանուր խմբ.), Ե., 1987, էջ 28:

⁸ Бурукина О. Е., *Коннотативное поле в переводе. Мир перевода, М., 1999, с. 39.*

⁹ Арнольд И. В., *Стилистика современного английского языка. Стилистика и декодирование, М., 1981, с. 106.*

Մեծ նշանակություն ունի նաև գեղարվեստական տեքստի հիմնանշանակային (լեզվամիավորների նշանակության հիմնական, կայուն տարրին վերաբերող) դաշտի բովանդային բնութագրերի բացահայտումը¹⁰: Ըստ Լ. Բաբենկոյի և մյուսների՝ «Իր կառուցվածքով այն կարող է լինել միանուն՝ կազմակերպած մի կետի շուրջ և բազմանուն՝ կազմակերպած մի գլխավոր կամ մի քանի երկրորդական կետերի շուրջ»¹¹:

Շարահյուսական մակարդակում ուսանողները բացահայտում են այն խոսքի արտահայտչամիջոցները, որոնք, չլինելով պատկերակերտ, խոսքին հաղորդում են լրացուցիչ հուզականություն: Դրանք են շրջուն շարադասությունը, ճարտասանական հարցը, զուգադրական կառույցները, կրկնությունները, աստիճանավորումը, զեղչումը, բաղիյուսումը, ընդլայնումը, ընդհատումը և այլն¹²: Նշված և այլ ոճական հնարների վերլուծությունը օգնում է ուսանողներին ճիշտ ընտրել ուսուցվող տեքստը, հասկանալ այն, բացահայտել հեղինակի մտահղացումը, ընդգծել այն հնարները, որոնց միջոցով ստեղծվում է հոգեբանական առումով լարված մթնոլորտ¹³: Պակաս կարևոր չէ գեղարվեստական տեքստի վերլուծությունը հնչյունային-հնչերանգային մակարդակում, քանի որ ուսանողները կարողանում են տեքստում բացահայտել հնչյունակրկնության, բառակրկնության, առձայնության (assonance), բաղաձայնության (alliteration), բռնաձայնության (onomatopée), հարանունության կամ բանադարձման (paronomase) առանձնահատկությունները, հասկանալ դրանց դերը տեքստի իմաստի բացահայտման գործում¹⁴:

Այսպիսով, գեղարվեստական տեքստի բանասիրական վերլուծությունը սովորողների լեզվաբանական և գրականագիտական գիտելիքների, նրանց ստեղծագործական և քննադատական մտածողության անբաժանելի մասն է:

Գեղարվեստական տեքստի կարևորագույն գործառնություններից է սովորողների խոսքային արտահայտչամիջոցների զարգացումը: Նրանք պիտի ընդհանուր պատկերացում ունենան արտահայտիչ խոսքի, նրա ձևավորման մեխանիզմների մասին: Սովորողները պիտի կարողանան ոչ միայն վերլուծել, այլև գնահատել այն՝ ըստ գեղարվեստական, ոճական և այլ արժանիքների:

Գեղարվեստական տեքստերի ուսուցման հիմնախնդիրը որոշակիանում է տարբեր դասընթացների (դպրոցական, բուհական, հետբուհական) շրջանակներում: Ակնհայտ է, որ գեղարվեստական տեքստի ընտրության, վերլուծության, ուսուցման հարցերը նոր

¹⁰ Նազարյան Ա., *Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան*, Ե., 1993, էջ 154:

¹¹ Бабенко Л. Г., Васильев И. Ф., Казарин Ю. В., *նշվ. աշխ.*, էջ 139:

¹² Պետրոսյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 506-507:

¹³ Терновская Н. Г., *Структурно-коммуникативная основа ретардации в предложении. Сборник научных трудов МГПИИЯ им. Мориса Тореза. Вып. 334. Содержание и принципы лингвостилистических исследований*, М., 1989, с. 84.

¹⁴ Նազարյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 364:

հնչեղություն են ստանում նախ և առաջ լեզվագիտական ուղղվածության բուհական դասընթացներում, քանի որ այն դառնում է ոչ միայն միջոց, այլև ուսուցման նպատակ: Ուսումնական, բնագրային, գեղարվեստական տեքստերի տարբերակումը իրականացվում է ըստ նրանց ոճաժանրային, բովանդակային, գենդերային բնութագրերի: Գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերի տարաբաժանումը դժվարանում է նրանով, որ ոչ գեղարվեստական տեքստերի գործառական ոճի որոշ գծեր կարող են տեղ գտնել գեղարվեստական տեքստերում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ուսանողները պիտի ձգտեն ճիշտ որոշել գեղարվեստական տեքստի գործառական ոճը, հիմք ընդունելով այն, որ նրա բառապաշարը տարաբնույթ է, բազմագործառույթ և տարասեռ: Գեղարվեստական տեքստի ընտրության և վերլուծության գործընթացում կարևորվում է նրանց ժանրային և հեղինակի տաղանդաշարային գիտակցության առանձնահատկությունները: Հեղինակի անձի պսիխոպայթոլոգիկ շեշտադրության և նրա ստեղծագործությունների թեմատիկայի միջև կապի վերլուծությունը նպաստում է գեղարվեստական տեքստի գործառական տարրերի բացահայտմանը:

Բառային, ձևաբանական, շարահյուսական, հնչյունաբանական մակարդակներում գեղարվեստական տեքստի վերլուծությունը համարվում է տեքստի հետ աշխատանքի ավանդական ձև, որը կարող է արդյունավետ լինել ժամանակակից մոտեցումների՝ մշակութաբանական, գենդերային, խոսութային, էթնոլեզվաբանական և այլնի համալիր կիրառմամբ:

ПРОБЛЕМА ОТБОРА И АНАЛИЗА ХУДОЖЕСТВЕННЫХ ТЕКСТОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОМУ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

ДАВТЯН С. Д.

Резюме

В процессе обучения анализу художественного текста в лингвистическом вузе изучаются основные содержательные и функциональные характеристики анализа художественного текста; при этом вырисовываются основные подходы к отбору учебных, аутентичных, художественных текстов с точки зрения их стилистических, жанровых, а также содержательных и гендерных характеристик, а также связь и взаимозависимость между психопатическим сознанием автора и тематикой данного произведения с точки зрения функциональных характеристик художественного текста. В общих чертах характеризуются традиционные (морфологический, синтаксический, фонетический) и современные подходы (культурологический, гендерный, дискурсивный) к анализу художественного текста.